

Մակար Բարխուդարյանցի «Արցախ» աշխատությունը ադրբեջանական «աղվանագիտության» կեղծիքների հերքման համատեքստում

Մուսայելյան Սոնա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-102>

Հագուցային բառեր. *Մակար Բարխուդարյանց, Արցախ, պատմական, աղբյուրագիտական և ստեղծագործական փաստեր, Ուլվիա Հաջինա, ադրբեջանական կեղծիք*

Հայագիտության մեջ Մակար Բարխուդարյանցի «Արցախ» գրքին անդրադարձել են Ա. Առաքելյանը [3, 72], Պ. Չոբանյանը [10, 7-15], Զ. Բալայանը [6, 604], Վ. Եղիազարյանը [8, 320], Թ. Մինայանը [9, 20] և այլք:

Ադրբեջանական «աղվանագիտությունը» սեփականում է ոչ միայն հայ մշակույթի նշանավոր գործիչներին՝ ներկայացնելով նրանց որպես աղվան, այլև կեղծում հայ հոգևոր ժառանգությունը՝ ավետարանների ու հիշատակարանների պատմական փաստերի խեղաթյուրմամբ ստեղծելով կեղծ գիտություն:

Ու. Հաջինան իր «Дезтнизация кавказских албан в XIX веке» գրքում խոսելով Մակար Բարխուդարյանցի աղվանական ծագման, աղվան հոգևորական լինելու, արցախյան եկեղեցիների ավետարանների և հիշատակարանների «աղվանական» լինելու մասին, երբեք չի անդրադարձնում այն հարցին, թե ում է Մակար Բարխուդարյանցը ընծայագրել իր «Արցախ» գիրքը:

Ավելին՝ անտեսելով կենսագրական փաստերը՝ Ու. Հաջինան Մակար Բարխուդարյանցին ներկայացնում է ոչ միայն որպես աղվան, այլև շարունակում, որ Մակար Բարխուդարյանցը փորձում է աղվանական մշակույթը ներկայացնել որպես հայկական. «Являясь одним из последних представителей албанского духовенства, уже подвергшегося процессу григорианизации и арменизации, М.Бархударянц в начале своего труда декларативно заявляет, что составил труд по истории 15-го округа «Великой Армении». Арцаха, и пытается представить албанское духовно-культурное наследие как армянское» [12, 17]:

Հակառակ այս պնդման՝ Մակար Բարխուդարյանցը գրքի առաջաբանում նշում է՝ այն ընծայագրել է Վեհափառ Խրիմյան Հայրիկին. «...վասն որոյ բարութ համարեցի նուիրել Հոգեծին և Բազմերայիտ Հորդ իմոյ՝ «Արցախ»-ը, որ պատկերացնում է Մեծն-Հայաստանի 15 նահանգներից մեկի հայկական աւերակների և հնութեանց փոշիները և Յիսուս Քրիստոսի ձեռագիր աւետարանների յիշատակարանների փշրանքները:

Յուսարվով արժանանալ ընդունելութեան և Հայրական օրհնութեան մնամ նուաստ որդի Ձեր հոգևոր Մ. Եպիսկոպոս Բարխուտարեանց» [4, Ա]:

Այնուհետև Մակար Բարխուդարյանցը իր ծննդավայրին ու ծագումնաբանությանը անդրադարձնում է «Արցախ» գրքում՝ տողատակի հղմամբ ներկայացնելով. «Գիւղունս ծնուած է և գրքիս հեղինակն. գիւղիս հանգստարանում հանգչում են իմ պապ Քեանդ-խուտա-Խաչատուր Բարխուտարեանցն իւր շատ քաջերով, իմ հայր Գրիգոր, իմ մայր Եղիաբէթ, իմ տատ Մարիամ, իմ հօրեղբարք Մկրտիչ, Մարգիւս, Թեոս, իմ վաղաթառամ եղբայր Ստեփան, բայց կենդանի են Աստուծոյ ամենակարող զօրութեամբ իմ մեծ եղբայր Կարապետն, փոքր եղբայր Յակովբն և իմ մեծ քոյրերս Անթառամն, Շահգասն և Հերիքնազն (վաղաթառամ վախճանուած է Պալլուճայում իմ միջակ քոյր Վառվառիան)» [4, 154]:

Թե ինչու է բնիկ արցախցի, ծնունդով խնածախցի Մակար Բարխուդարյանցին ադրբեջանցի գիտնականը ներկայացնում որպես աղվան, որն է գիտական հիմնավորում չի տալիս:

Ավելին՝ Ու. Հաջինան երբեք չի նշում, որ մահմեդականների ձեռքով են ոչնչացվում

պատմական հնություններն ու հիշատակությունները, նա շրջանցում է եղած փաստերը՝ առավելապես նախընտրելով որպես մեղավոր ներկայացնել կամ Էջմիածնի հոգևոր միաբնությունը, կամ էլ արցախահայերին. «Будучи подведомственными с 1836 г. Армянской Эчмиадзинской Церкви, эти монастыри к концу XIX в. уже не имели никаких архивов и библиотек, все таинственно исчезло. Это было связано с тем, что сами монастыри физически уничтожались, разрушались, церковная служба в них не велась, практически прекратилась, а вся церковная, литература была ликвидирована» [12, 19]:

Հակառակ այս պնդման՝ Մակար Բարխուդարյանը նշում է՝ մեկ անգամ չէ, որ հայկական հնություններն ավիրվել ու կործանվել են մահմեդականների ձեռքերով. «Հայաբնակ էր գաւառս վաղուց. բայց հայկական հնութիւններն իսպառ անհետացած են **մահմետական քնակիչների ձեռնով**» [4, 27]:

Ավելին՝ մեծ թիվ են կազմում Մակար Բարխուդարյանցի վկայությունները մահմեդականների կողմից հայկական հնությունների ոչնչացման մասին, նույնիսկ «Օսմանյութիւններ» բաժնում է հեղինակը անդրադառնում մահմեդականների վայրագություններին. «Ոչ մի գաւառ զարդարուած չէ այնքան քարեայ խաչարձաններով, որքան Գարդման գաւառս և նոյն իսկ Գարդման աւանս: **Գեղեցիկ խաչարձաններով զարդարուած են կոտորած և ջարդած են մահմետականք**» [4, 431]:

Մահմեդականների կողմից հայկական հնությունների ոչնչացումը միայն մեկ նպատակ էր հետապնդում. առավելապես վերացնել հայկական Արցախի հնամենի մշակույթը, եկեղեցիները, խաչարձանները, ավետարաններն ու հիշատակությունները:

Ու. Հաջիևան շարունակում է համառորեն հակադրվել՝ ի պաշտպանություն մահմեդականների՝ իրեն բնորոշ ձևով կրկին շրջանցելով եղած փաստերը. «Приписать подобное изуродование и уничтожение евангелий отношению мусульман неправомерно, ибо, во-первых, М.Бархударянц в начале своего труда заявляет, что еще в 1828 г. все албанское церковно-культурное наследие было в цветущем состоянии, т.е. в прекрасной сохранности до Туркманчайского договора. Во-вторых, если бы мусульмане уничтожали бы евангелия, они уничтожили бы их целиком. Какой смысл мусульманам уничтожать колофоны, а сами христианские писания оставлять?! Армянская Эчмиадзинская Церковь, захватив албанское этнокультурное наследие, приступила к его полной трансформации в армянское, что выразилось также в физическом уничтожении албанских евангелий во всех монастырях и церквах Арцаха» [12, 25]:

Մինչդեռ Մակար Բարխուդարյանը ցավով արձանագրում է Արցախի պատմական հնությունների նկատմամբ կատարած վայրագությունների մասին՝ խոր ափսոսանքով նշելով. «Վանքեր, մատուռներ և բեմեր. կարծում եմ թէ ոչ մի նահանգ այնպէս հարուստ չէ այսպիսի սրբավայրերով ու ուխտատեղիներով, ինչպէս Արցախեան նահանգն. բայց եւ այնպէս ոչ մի նահանգի վանքեր, անապատներ եւ ուխտատեղիներ այնպէս բոլորովին զրկուած չեն իւրենաց բարոյական եւ նիւթական փառքերից, ինչպէս Արցախեան վանքերն եւ սրբավայրերը» [4, 5]:

Պարզ է՝ եղած փաստերն էլ բավարար չեն Ու. Հաջիևայի համար, որ շարունակի պնդել հայերի կողմից աղվանական մշակույթի ոչնչացման մասին: Մինչդեռ այլ է պատկերը իրականում, հայկական հնությունները ոչնչացվել են հիմնականում մահմեդականների ձեռքով: Բսկ Ու. Հաջիևան շարունակում է կրկնել. «Совершенно пагубно осмыслять наличие армяноязычной, но албанской по содержанию, эпиграфики в качестве армянской и доказывать ее принадлежность к армянскому этнокультурному наследию. Лишь в этом суть того, что надписи на албанских храмах Арцаха дошли до нас на армянском языке, а на албанском их постарались уничтожить» [12, 70]:

Կեղծարարությունների շարքը ավելի ուժեղ ու բովանդակային դարձնելու համար Ու.

Հաջիկան մեջբերում է կատարում Ի. Ճավճավաձեից [13, 13], անդրադառնում նաև վրաց ժողովրդին, բայց արդյունքում կրկին մեղադրում է հայերին՝ վրացական մշակույթը ոչնչացնելու համար. «Как нами было указано выше, армянские ученые, несомненно, не без поддержки Армянской Эчмиадзинской Церкви, на протяжении всего XIX в. подвергали критике и частичной трансформации и грузинское этнокультурное наследие. И.Г.Чавчавадзе писал, что «свидетелями, говорящими о грузинах, служат летописи и хроники. Армянские ученые отлично понимают, что если только эти данные не будут уничтожены, они ничего особенного не смогут присвоить себе в Грузии» [12, 44]:

Մեջբերում կատարելով Ի. Ճավճավաձեից, Ու. Հաջիկան կա՛մ չի ցանկանում, կա՛մ չգիտի, կա՛մ է չիմանալու է տալիս Ք. Վերմիշլի (Վերմիշյանցի) «Материалы для истории грузино-армянских отношений: Ответ на книжку кн. И.Г. Чавчавадзе: Армянские ученые и "вопиющие камни"» գիրքը, որում հեղինակը պատասխանում և փաստերով հերքում է Ճավճավաձեի տեսությունը. «Грузинские надписи армянскими учеными монахами тщательно собирались и даже печатались, и, возможно, раньше, самими грузинами, было уделено серьезное внимание на грузинские надписи. Такое же отношение приходилось наблюдать нам лично. Во время наших археологических поездок мы видели грузинские надписи в местностях, исключительно армянских населений, особенно в селе Кош, т. е. почти под боком Эчмиадзина, и если замечалось что-либо в армянах, местных и сопровождающих нас, так это было озлобление против следов временного грузинского господства в Армении. В Александропольском уезде в открытом поле был найден кусок каменного креста с интересной грузинской надписью, интересной по самому своему место-нахождению, и этот камень с грузинской надписью был подобран и спасен армянином для научных исследований. Мы это видели своими глазами. Строки эти, принадлежащие компетентному лицу, могли бы вразумить каждого непредубежденного читателя. Но видно есть уши, которые совершенно глухи ко всему, что только может служить в пользу доброго имени армян, и болезненно чутки к малейшему факту, способному их опорочить» [11, 72]:

Ու. Հաջիկայի կեղծարարությունը այնքան սնանկ է, որ չի դիմանում քննության, հերքվում է ինչպես հայերեն, այնպես էլ օտարալեզու արդյունքների փաստերի հիման վրա: Ք. Վերմիշլի գրքում մեծ թիվ են կազմում այն էջերը, որով հեղինակը հերքում է Ճավճավաձեի, արդյունքում անտողակիրեն հերքվում է նաև Ու. Հաջիկայի տեսությունը:

Քանի որ Ու. Հաջիկան մշտապես շրջանցում է իրականությունը, նախընտրում ներկայացնել կոնտեքստից դուրս հատվածներ, նա նաև չի անդրադառնում Աղվանքի կաթողիկոսների ծագումնաբանությանը: Հատուկ ուղղվածությամբ հայ կաթողիկոսներին աղվան ներկայացնելը կրկին նպատակային է Ու. Հաջիկայի համար. «Теперь рассмотрим отдельные фрагменты из албанских евангелий, которые содержат ценную информацию об албанском католикосате. Благодаря колофонам становятся известны имена албанских католикосов, возглавлявших Албанскую Апостольскую Автокефальную Церковь в момент написания того или иного евангелия: (X' Ованнеса (1579 г.), Григория (1645-1650 гг.), Петроса (1663-1671 гг.), Еремии (1680 г.), Есайи (1717 г.), Нерсеса (1742-1745 гг.), а также имена некоторых епископов (Саркиса, епископа Хаченского из рода Гасан-Джалала (начало XIV в.); X'Ованнеса, епископа Велико-Сюникского Татевского монастыря (1585 г.).» [12, 34]:

Ազգությամբ հայ Ջալալի սերնդից վերոնշյալ կաթողիկոսները ըստ Ու. Հաջիկայի աղվան են: Թե՛ ինչ տրամաբանությամբ են աղվան հռչակվում այս կաթողիկոսները, պարզ չէ:

Եվ դա այն դեպքում, երբ Հասան Ջալալին հայ է անվանել Կիրակոս Գանձակեցին. «...որին փաղաքշանքով Ջալալ էին կոչում, աստվածապաշտ, երկյուղած ու պարկեշտ մարդ էր, ազգությամբ հայ» [7, 257]:

Ի լրումն վերոնշյալի՝ Դ. Ալիշանը իր «Արցախ» աշխատության մեջ գրում է. «Իսկ Աղվանքի վերջին կաթողիկոսներից և վանքի առաջնորդներից շատերը Ջալալի սերնդից են: Դրանք են՝ Սարգիսը՝ 1556-ին. Գրիգորը, որը հետո ուրացող դարձավ:

Դավիթ Արջաձորեցին, որին խեղդեցին խաչենցիները՝ կախելով եկեղեցու զանգակասնից:

Փիլիպպոսը.

Հովհաննես Ը-ն.

Գրիգոր Դ-ն՝ 1634.

Պետրոսը՝ 1653.

Սիմեոնը՝ 1675.

Երեմիան՝ 1676.

Եսային՝ 1702, որը գրի առավ ժամանակի դեպքերը:

Ներսես Ե-ն՝ 1706 թ., որը Եսայու հակառակորդն էր:

Իսրայելը և Հովհաննեսը՝ 1763.

Սարգիս Բ-ն՝ աթոռի հակառակորդը, 1794, որի ժամանակ, 1815 թ., վերացվեց Աղվանքի կաթողիկոսության անունը և տրվեց մետրոպոլիտի աստիճան: 1838 թ. նրան հաջորդեց Բաղդասար Հասան-Ջալալյանը, որը արքեպիսկոպոսական աթոռը տեղափոխեց Ծուշի» [1, 88]:

Արցախյան եկեղեցիների և վանքերի ավետարանների ու հիշատակարանների սեփականումը կամ աղվանական ներկայացնելը Ու. Հաջինայի հիմնական նպատակներից մեկն է: Նա նպատակային ձևով է սեփականում արցախյան ավետարանները՝ նախ ներկայացնելով որպես աղվանական, այնուհետև՝ որպես աղբբեջանական: Ու. Հաջինան, մեջբերում կատարելով Մ. Բարխուդարյանցից, նշում է. «2. «окончено сие евангелие в 1108 (1659) г. в стране Гянджа, в селе Караат под покровительством Пресвятой Богородицы во времена католикоса Агвании владыке Петросе» (из церкви св. Богородицы XVII в. в городке Аветараноц, в округе Варанда» [12, 27]:

Խոսքն Աղվանքի այն նույն տեր Պետրոսի մասին է, որ Ջալալի սերնդից է: Իսկ Մակար Բարխուդարյանցը նշում է. «...եղև աւարտ սուրբ անետարանիս ի յերկիրս Գանջայ ի գիւղս, որ կոչի Քարահատ ընդ հովանեաւ սուրբ աստուածածնիս ի ժամանակս Շահ Ապախին փոքոյ և ի կաթողիկոսութեան հայոցս Աղուանից տեառն տէր Պետրոսի մաքրասուն և սուրբ հայրապետի և կրկին լուսավորչի, որ և խնամօքն Աստուծոյ» [4, 96]:

Ինչպես արդեն նշել ենք, Ու. Հաջինան շատ դեպքերում աղավաղում է նաև ավետարանների բովանդակությունը՝ առավելապես համապատասխանեցնելով իր գրքի բովանդակությանը:

Բացի այն, որ Ու. Հաջինան մեջբերում է ավետարանի միայն ավարտուն կամ վերջնական մասը, նա չի նշում որևէ կոնկրետ փաստ, թե ինչու է այս կամ այն ավետարանը աղվանական: Շատ դեպքերում աղբբեջանցի գիտնականը որպես փաստ ընդունում է միայն «աղվանական» եզրույթը:

Մակար Բարխուդարյանցը տալիս է նաև նույն ավետարանի սկիզբը. «Սուրբ անետարան սրբագիր և ռսկեգօծ **վախմ /իբրև բարեպաշտական նւէր եկեղեցուն կտակուած հող կամ կալուած/** [5, 295] և յիշատակ է Աբրահամ պարոն-Տերին, որ տվան /տվեցին/ Մէլիք Պաղուն կուսակրոն դստերանցն Հռուբսիմեին և Դաւլաթին և Շահանդուխտին ձեռքն ի վայելումն...» [4, 96]:

Հայկական Արցախի հոգևոր ու մշակութային ժառանգությունը սեփականելու համար Ու. Հաջինան որպես աղվան է ներկայացնում ոչ միայն իրենց հայ համարող մշակույթի ու կրոնական երևելի գործիչներին, այլև արցախյան վանքերի ու մատուռների ավետարաններն ու հիշատակարաններն է փորձում ներկայացնել որպես աղվանական:

Այդ առումով Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու գրչագրերը՝ ավետարանները հիշատակելիս՝ Ու. Հաջինան 12 ավետարաններից մեջբերում է միայն առաջին, երկրորդ, չորրորդ, հինգերորդ ավետարանները. այսինքն նրանք, որոնցում կա աղվանական եզրույթը. «По словам М. Бархударянца, в Соборной церкви Все-спасителя в Шуше, построенной в 1868-1887/1888 гг., имелись 12 евангелий, из которых, судя по их памятным записям, 4 были албанские, ибо они были написаны в округах Вайоцдзор, Хачмаз, Нахчеван. Относительно других 4-х евангелий источник сообщает, что они были написаны в г. Феодосия, Константинополь, Ван: «первое евангелие пергаментное написано в г. Феодосия, второе – в столице Константинополе... в 1105 (1656) г.»; «из памятной записи четвертого евангелия следует: «ныне завершено сие святое евангелие... в городе Ван в 909 (1460) г.»; колофон пятого евангелия гласит: «...принял сие евангелие и милостью Божьей завершил в городе Ван в 910 (1461) г. в патриаршество тер Захария, который воссел на престол св. Просветителя в Эчмиадзине» [12, 30]:

Հիմնական նյութի խեղաթյուրումը, կարճ մեջբերումներ անելն արդեն հիմնանպատակ է դարձել աղբբեջանցի գիտնականի համար: Նա այս ձևով փորձում է ներկայացնել չեղած իրողություններ՝ աղբբեջանական կեղծ աղվանագիտությունը նոր փաստերով հարստացնելու համատեքստում: Բայց ասվածը ավելի հասկանալի դարձնելու համար մեջբերենք Մ. Բարխուդարյանցի ներկայացրած 12 ավետարանների կարևոր հիշատակությունները, որոնցում չի գտնվի գեթ մեկ փաստ վերջիններիս աղվանական լինելու մասին:

Առաջին ավետարանում նշվում է «ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տեր Խաչատուր արհնեալ քահանայապետի» [4, 139]:

Երկրորդ ավետարանը դազանչեցի Նարինեն ընծայում է եկեղեցուն, յոթերորդ ավետարանը գրվել է Արցախի Վարանդա գավառի Խաչմաչ գյուղում.«Աւետարան միջակ դիրքով, թղթի վերայ, գրուած է Արցախի Վարանդայ գաւառի Խաչմաչ գիւղում Աղեքսանդր եպիսկոպոսի ձեռնով ՌՇԸ. թուիս Հայոց, իսկ ստացած է Թաղէտս քահանան: Բոլորովին անճաշակ են պատկերներն» [4, 139]:

Ուշագրավ է հատկապես 11-րդ ավետարանի հիշատակումը, որով հերքվում է Ու. Հաջինայի այն պնդումը, թե հայկական ավետարանները «աղվանական» ծառանգություն են: Ու. Հաջինան այս պնդումը ներկայացնում է առանց որևէ համոզիչ պայացույցի՝ պարզապես կրկնելով այն կեղծ թեզերը, որոնք բացահայտորեն չեն հաստատվում որևէ աղբբուրով: Նա չի տրամադրում փաստական նյութ, որը կվավերացներ իր տեսությունը, և գրքի ողջ բովանդակությունը չի հիմնվում իրական պայացույցների վրա. **«Բազում արիւն անմեղաց եղաւ (հեղաւ) երկրի, անթիւ գիրք և անմեղ գերիք անկան ի ձեռն անօրինաց: Եկեղեցիք խախթեալ և խաւարեալ ամայի մնացին: Երկրորդ Օսմանլուն եկաւ կրկին, բազում արիւն-հեղութիւն եղև. Գերիսն անթիւ եղև ի ձեռս օսմանցոց վասն մեր ծովացեալ մեղացն՝ սուք մեծ եղև քրիստոնէից ազգիս...»** [4, 141]:

Այս ավետարանի մեջբերմամբ մեկ անգամ ևս հաստատվում է՝ արցախյան ավետարանները, հիշատակարանները ոչնչացվել են մահմեդականների ձեռքով:

Հիշատակության է արժանի նաև 12-րդ ավետարանից պահպանված 2 մասունքներից երկրորդը. «Արտաքուստ արևմտեան գաւթի հիւսիսային կողմում ամփոփուած է Անդրէաս եպիսկոպոսի մարմինն, որի տապանաքարի վերայ քանդակուած է՝ թագ, գաւազան և իւր տիտղոսների ձեւերն և արձանագրութիւնն, **վիճակավոր առաջնորդ Թեմին Հայոց Արցախայ Անդրէաս արքեպիսկոպոս** Պօլսեցի վախճանեալ է 8 Սեպ. 1882 ամի ի հասակի 48 ամաց» [4, 143]:

Անշուշտ Ու. Հաջինան շրջանցում է Հովհաննես կաթողիկոսին, Արցախի Անդրեաս արքեպիսկոպոսին, դազանչեցի Նարինեին, հայոց խաչաբակեցի Միրզանց Սահակի որդի Գեորգին, որովհետև միայն փաստերը շրջանցելով և խեղաթյուրելով է հնարավոր արցախ-

յան մշակույթը ներկայացնել աղվանական, հայերին մեղադրել աղվանական մշակույթը ոչնչացնելու և սեփականելու մեջ, մինչդեռ այլ են ավետարանների վկայությունները և հիշատակությունները:

Ինչպես պարզ է դառնում, չկա գեթ մեկ ավետարան կամ հիշատակարան, որ աղվանական լինի: Ու. Հաջինայի համար նշանակություն չունի նույնիսկ այն փաստը, որ ավետարանը գրվել է Արցախի Խաչմաչ գյուղում, աղբբեջանցի գիտնականը առավելապես նախընտրում է մեջբերել կամ որպես փաստ ներկայացնել այն հատվածները, որտեղ կա միայն աղվանական եզրույթը:

Մ. Բարխուդարյանցի աշխատության կարևոր նշանակության մասին խոսելիս Ու. Հաջինան իր գրքի երկրորդ գլխում նշում է. «Макар Бархударянц в своем труде «Арцах» дает в хронологической последовательности все местопребывания Албанского католикосата..., сведения М.Бархударянца весьма ценны для воссоздания истории Албанской Апостольской Автокефальной Церкви, ее структуры, для понимания дальнейшей судьбы албанской культуры - письменности, литературы, культовых памятников, для выяснения истинной причины фантастического исчезновения албанской эпиграфики и многих албанских храмов» [12, 53]:

Սակայն այլ է գրքի նշանակությունը, ինչի մասին Մ. Բարխուդարյանցը գրում է. «Սակայն տեսնելով որ ժամանակի անողոր ճիրաններն լափում եւ եղծում են մեր թանկագին հայրենիքի-Արցախի ամենապատուական հնությունները եւ արձանագրությունները. տեսնելով որ տգետ եւ թշնամի ձեռներ քանդում, ււերում եւ ոչնչացնում են հայրենի սրբազան ւաւանդները. տեսնելով որ ցեցերն կրծում եւ անհայտացնում են անգին ձեռագիրների յիշատակարաններում եղած պատմական մարգարիտները եւ խոնաւությունն ու անհոգութիւնն կլանում են պատմական ակունքները...» [4, Ա]:

Սակար Բարխուդարյանցը գրքի «Յառաջաբանություն» բաժնում կետերով նշում է՝ ինչ հարցեր են քննարկվում գրքում, ինչ նպատակով է գրվել գիրքը, բայց հեղինակը որևէ խոսք չի ասում հայերի կողմից աղվանական եկեղեցիների ու մշակույթի ոչնչացման մասին. «Վանքեր, մատուռներ եւ բեներ. կարծում եմ թէ ոչ մի նահանգ այնպէս հարուստ չէ այսպիսի սրբավայրերով ու ուխտատեղիներով, ինչպէս Արցախեան նահանգն. բայց եւ այնպէս ոչ մի նահանգի վանքեր, անապատներ եւ ուխտատեղիներ այնպէս բոլորովին գրկուած չեն իւրեանց բարոյական եւ նիւթական փառքերից, ինչպէս Արցախեան վանքերն եւ սրբավայրերն» [4, Է]:

Մինևույն ժամանակ Ու. Հաջինան կեղծում է այն փաստը, որ Մ. Բարխուդարյանցը իր «Արցախը» գրել է ոչ միայն աղվանական մշակույթը կործանումից փրկելու, այլև աղվան ժողովրդի ինքնության փրկության համար. «Согласно М.Бархударянцу, он будто бы стремился создать труд по истории 15-го округа Великой Армении, но на самом деле дополнил еще одну страницу к истории албанского (агванского) этноса. Об албанском происхождении монастырей свидетельствует содержание надписей на дверях, алтаре, притворе, стенах снаружи и внутри монастырей» [12, 70]:

Սակար Բարխուդարյանցը նշում է՝ ինչ նպատակով է գրել «Արցախ» աշխատությունը, խոսում նաև «Աղվանից երկիր և դրացիք» [2, 383] աշխատության պատմական նշանակության մասին. «Վերստին Գանձասար, ուր եւ վախճանուած է կաթողիկոսութիւն Աղվանից եւ թաղուած Վերջին Սարգիս կաթողիկոս Ջալալեանցի գերեզմանում: Աղուանից կաթողիկոսների մասին գրելու եւ «Աղուանից պատմութեան» մէջ եւ ոչ այստեղ: Որովհետեւ արդէն գրած եւ «Աղ. երկ. և Դրացիք» գրքում որոյ ավելորդ համարեցի գրել Արցախի կրօնական եւ քաղաքական կենաց մասին եւ գիւղական հիւանդությունների եւ բժշկութիւնների եւ կերակուրների մասին, որք գրեթէ նոյն են ամենայն մասամբ, միայն Արցախն չունի խընկալ կերակուրը» [4, Զ]:

Չբավարարվելով պատմական հնությունները սեփականելով՝ Ու. Հաջիևան փորձում է խեղաթյուրել նաև Արցախի սահմանները՝ նշելով. «По сведениям М.Бархударянца, «Арцахская область состояла из 24 округов (13-арцахских, 6-Утийской области, 4-Шакашен, Гардман, Колт и Заве; а также область Вартана-керт), принадлежащих агванцам» [12, 81]:

Ըստ Ու. Հաջիևայի՝ Վարդանակերտը պատկանում է Աղվանքին, մինչդեռ Մակար Բարխուդարյանց գրում է. «Քսան և չորս գաւառը ամբողջացնում է այսպէս- 13 Արցախի, 6 Ուտի գաւառի, 4 վերևի գաւառներն են, որք են Շիկաշեն և այլն. Վարդանակերտ գաւառ, որ գտնվում է Կուր և Երասխ գետերի խառնուրդի մէջ, **որով ամբողջանում են Արցախեան նահանգի 24 գաւառներն**» [4, Ա]:

Խոսելով հայկական գավառների դատարկվելու մասին՝ Ու. Հաջիևան շրջանցում է այն փաստը, թե ինչով է պայմանավորված այդ գործընթացը, ինչն է եղել պատճառը: Եվ առանց պատճառը նշելու Ու. Հաջիևան փորձում է ապացուցել հայերի ոչ բնիկ լինելը, նրանց կողմից օտար (տվյալ դեպքում՝ աղվանական) մշակույթը սեփականելը. «Из выше-изложенного следует, что М.Бархударянц вносит этническое разграничение между армянами и теми, кто исповедует армянскую веру - утийцами. Он указывает на то, что в этих местах армяне не жили, а удины (утийцы, удинцы) просто покинули родные места, где были разрушены и поруганы все их святыни и церкви» [12, 82]:

Մ. Բարխուդարյանցը նշում է ոչ միայն հայկական գավառների դատարկվելու պատճառը, այլև տալիս է Արցախյան նահանգում օտար ցեղերի բնակության պատկերը. «Բոլորովին զարմանում եւ սրտաճմլիկ դրութեան մէջ է ընկնում հետազօտող հայն, երբ տեսնում է միլիօնատր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած: Այո, դատարկուած են իւրեանց հայ եւ հայադաւան բնակիչներից Պիան, Մուղան, Վարդանակերտ, Արանոտ, Տրի, Ռոցպատեան, Աղուէ, Տուչքատակ, Ուտիմիս, Ծար եւ Ըռստակ գաւառներն. իսկ կիսով չափ կամ ամենամեծ մասամբ դատարկուած են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Ջաւէ, Ջրաբերք, Խաչեն, Վարանդայ և Դիզակ գաւառներն» [4, Է]:

Մ. Բարխուդարյանցը այնուհետև նշում է պատճառը՝ ինչու են դատարկվել հայկական գավառները, ինչն ուղղակիորեն շրջանցում է Ու. Հաջիևան. «Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներ: – Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն Պարսկաստան, մի մասն Շարի եւ Շամախի, մի մասն Կախէթ եւ Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Ղարբանդ եւ Ռուսիա» [4, Է]:

Չբավարարվելով պատմականորեն դատարկությանը՝ Ու. Հաջիևան փորձում է նաև ժխտել հայկական ուսումնարանների գոյության փաստը.

«Ввиду того, что все монастыри и церкви Арцаха являлись албанскими, то они подлежали уничтожению и запустению со стороны Армянской Эчмиадзинской Церкви, чем был положен конец школам, находившимся при этих монастырях, по выпестовыванию албанской образованности» [12, 87]:

Մինչդեռ Ու. Հաջիևայի տեսությունը հերքվում է, երբ հղում ենք Մ. Բարխուդարյանցին.

1. «Շինեցաւ ուսումնարանն արդեամբ ի յիշատակ Բագուաբնակ Գրիգոր Թօմասեան Սյվազեանցին 1890 թիւ Դեկտեմբեր» [4, 103]:
2. «Գիւղումս (Գիիմի ճարտար) կայ Ս. Գրիգորեան միղասեան ուսումնարան տղայոց, աշակերտք մօտ 50, թռչակատու 38, ձրիավարժ 10. Միամեայ ոռճիկ վարժաօետին 220 ր» [4, 119]:
3. «Տղայոց միղասեան ս. Գրիգորեան ուսումնարան. աշակերտ 40, թռչակատու 38, տարեկան ոռճիկ վարժապետին 360 րբլ (Վարազարուն-Արանգամի գյուղ)» [4, 129]:
4. «Անապատիս արևմտեան կողմին խիստ մօտ է Հայոց Ուսումնարանի շէնքն, որ դեռ

կիսատ է և ունի 34 մետր 45 սանթիմ երկարություն և (պատշգամբով միասին) 11 մետր լայնություն» [4, 226]:

5. «Գիւղում (Մեծ-Բանանց) կայ տղայոց միդասեան ուսումնարան, որ ուսանում են 55 աշակերտ, թոշակատու 48, ձրիավարժ 7, միամեայ ռոճիկ ուսուցչի 35 թուրքի» [4, 285]:

6. «Միդասեան ծխական ուսումնարան. Աշակերտք 50, տարեկան ռոճիկ վարժապետին 300 ռուբլի (Ուզուն-Թալա գյուղ)» [4, 339]:

Հիշատակության է արժանի հատկապես հայոց բերդաքաղաք Շուշիի ուսումնարանները, որոնք ևս հիշատակվում են Մ. Բարխուդարյանցի կողմից:

7. «Թեմական դպրոց Ջ. Դասեան. Թիվ համօրէն աշակերտաց 330, թոշակատու 260, ձրիավարժ 70» [4, 150]:

8. «Մ. Մարիամեան օրիորդ. Երկդասեան ուսումնարան. Թիվ համօրէն աշակերտուհեաց մոտ 200, թոշակատու 165, ձրիավարժ 35» [4, 150]:

9. «Քաղաքում ևս կան Բէլալական զինակազմ. քաղաքական ուսումնարանն օրիորդաց վարժարան» [4, 151]:

Հայկական քաղաքներում և գյուղերում ուսումնարանների գոյության փաստը շրջանցելով, մահմեդականների կողմից պատմական հնությունների ոչնչացման իրողությունը քողարկելով, ավետարաններն ու հիշատակությունները աղվանական ներկայացնելով, հայոց կաթողիկոսներին աղվան համարելով՝ Ու. Հաջիևան իր գրքում փորձում է նպաստել աղբրեջանական կեղծ աղվանագիտությանը, ինչը սակայն ժխտվում է եղած հայ և օտարալեզու աղբյուրագիտական, հիշատակարանային ու պատմական փաստերով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-102>

Գրականություն

1. Ալիշան Ղ., Արցախ, Երևան, 1993:
2. Աղունից երկիր եւ դրացիք, ի Մակար ծ. Վարդապետէ Բարխուտարեանց, Թիֆլիս, 1893:
3. Առաքելյան Ա., Մակար եպիսկոպոս Բարխուդարյան (Միաբան Մայր Աթոռի, 1836-1906), Էջմիածին ամսագիր, 1974, թիվ Է-Ը:
4. Արցախ, երկասիրեց Մակար եպո. Բարխուտարեանց, Բագու, 1895:
5. Աճառեան Հ., «Հայերէն արմատական բառարան», Երևան, 1923:
6. Բալայան Ջ., Արցախը XIX դարի հայ գրականության մեջ, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2021:
7. Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, Երևան, 1980:
8. Եղիազարյան Վ., Հայագիտական ուսումնասիրություններ, Գ. Արցախի հայկականության ակունքները և աղբրեջանական աղվանագիտության կեղծիքների հերքում, Երևան, ՎՄՎ-ՊԲԻՆՏ, 2023:
9. Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, Երևան, «Նաիրի» հրատ., 2015:
10. Չորանեան Պ., Մակար եպո. Բարխուտարեանցի կեանքն ու գործը, Գանձասար Աստուածաբանական կենտրոն, Երևան, 1999:
11. Вермишев Х. Материалы для истории грузино-армянских отношений: Ответ на книжку кн. И. Г. Чавчавадзе: Армянские ученые и "вопиющие камни", Санкт-Петербург, 1904.
12. Гаджиева У. Деэтнизация кавказских албан в XIX веке, Баку, 2004.
13. Чавчавадзе И. Армянские учёные и вопиющие камни, Баку, 1902.

Работа Макара Бархударянца «Арцах» в контексте разоблачения азербайджанских фальсификаций «албанистики»

Мусаелян Сона

Резюме

Ключевые слова: Макар Бархударянец, Арцах, исторический анализ, источниковедение, интерпретация фактов, Улвия Гаджиева, азербайджанские фальсификации

Статья посвящена анализу и опровержению ложных утверждений, представленных в книге У. Гаджиевой «Дезэтнизация кавказских албан в XIX веке», на основе труда Макара Бархударянца «Арцах». Цель исследования – разоблачение фальсификаций Гаджиевой и опровержение теории азербайджанской «албанистики», включая попытки представить Бархударянца «албанским» деятелем и присвоить культурное наследие Арцаха.

Научная новизна работы заключается в использовании исторических, источниковедческих и творческих данных для опровержения псевдотеорий. Гаджиева умышленно игнорирует ключевой факт: Бархударянец посвятил книгу «Арцах» Католикосу всех армян Хримяну Айрику. При этом она искажает содержание Евангелий, выдает армянские школы, памятники и духовных лидеров за «албанские» и замалчивает исторические события, направленные на разрушение армянских объектов.

Проведённый анализ показывает, что подобные манипуляции не выдерживают критики с точки зрения источниковедения, истории и фактов. Исследование подчеркивает необходимость внимательного анализа первоисточников и защиты культурного наследия Арцаха.

Makar Barkhudaryants's Work "Artsakh" in the Context of Exposing Azerbaijani Falsifications of "Albanian Studies"

Musayelyan Sona

Summary

Key words: Makar Barkhudaryants, Artsakh, historical analysis, source studies, creative facts, Ulviya Hajiyeva, Azerbaijani falsifications

This article analyzes and refutes the false claims presented in U. Hajiyeva's book "De-Ethnicization of Caucasian Albanians in the 19th Century," based on Makar Barkhudaryants' work "Artsakh". The aim of this study is to provide a critical analysis of Hajiyeva's interpretations and to assess the theoretical premises of Azerbaijani "Albanian studies," including claims that identify Barkhudaryants as an "Albanian" figure and reinterpretations of the cultural heritage of Artsakh.

The scientific novelty of this work lies in its use of historical, source-based, and creative data to refute pseudo-theories. Hajiyeva deliberately ignores a key fact: Barkhudaryants dedicated his book "Artsakh" to the Catholicos of All Armenians, Khrimian Hayrik. Moreover, she distorts the Gospels, presents Armenian schools, monuments, and spiritual leaders as "Albanian," and conceals historical events aimed at the destruction of Armenian sites.

The analysis shows that such interpretations do not withstand scrutiny from the perspective of source-based historical and factual analysis. The study emphasizes the importance of careful examination of primary sources and the protection of the cultural heritage of Artsakh.

Ներկայացվել է 21. 05. 2025 թ.

Գրախոսվել է 27. 10. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.